«ԽԱՉԻԿ ՊԱՊԻԿԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ» • ԹԻՒ 12

ՍՓԻՒՌՔ ԵՒ ԻՆՔՆՈՒԹԻՒՆ

ԱՆԹԻԼԻԱՍ
2018

«ԽԱՉԻԿ ՊԱՊԻԿԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ» – ԹԻ՛ 12
«KHATCHIG BABIKIAN PUBLICATION FUND» – № 12

ՍՓԻՒՌՔ ԵՒ ԻՆՔՆՈՒԹԻՒՆ

ԱՆԹԻԼԻԱՍ
2018

Խմբագիր՝ Շահան Գանտահարեան

DIASPORA AND IDENTITY
Editor: Shahan Kandaharian
Printing House of the Armenian Catholicosate of Cilicia
© 2018 All Rights Reserved
Armenian Catholicosate of Cilicia
Antelias - Lebanon
ISBN: 978-9953-0-4598-6

Cover design: Sako Sarkissian

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՁԵՒԱՒՈՐՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄԱՓՈՒԼԵՐԸ

Մարդկային հասարակութեան պատմութիւնը ձեւաւորւում է ընկերային (սոցիալական), ցեղային-ռասայական եւ անհատական դրուագների ու անցքերի ամբողջութիւնից: Անհատի, տոհմի, ցեղի, ժողովրդի եւ ազգի առաջացումը ենթադրում է այդ կարգավիճակին բնորոշ բազմաթիւ յատկանիշների միաժամանակեայ կամ մասնակի առկայութիւն: Դրանց մէջ կարեւորւում է ինքնութեան ընկալման յատկանիշը, որը ձեւաւորուելով մարդ-անհատի մակարդակով, ապա զարգացում է ապրում ընկերային ու ցեղային աւելի բարձր մակարդակներում եւ իր բարձրակէտին հասնում ազգի երեւան գալու ժամանակ: Հետեւապէս, իւրաքանչիւր ազգ իր անցած պատմական ուղուն զուգընթաց, ինքնութեան մէջ ունենում է յարատեւ փոփոխութիւններ, որոնք ըստ այդմ էլ կարելի է բաժանել պատմափուլերի:

Հայոց ինքնութեան զարգացման ընթացքը պայմանականօրէն կարելի է բաժանել հետեւեալ փուլերի՝ *վաղագոյն կամ ինքնութեան ձեւաւորման շրջան, պետական մտածողութեան ինքնութեան շրջան, քրիստոնէական ինքնութեան ձեւաւորման շրջան, ինքնութեան ձեւախեղման շրջան եւ վերջապէս՝ ինքնութեան վերակերտման ու զարթօնքի շրջան:*

ա) **Ինքնութեան ձեւաւորման շրջափուլ:** Հայ ժողովուրդը, լինելով աշխարհի հնագոյն ու քաղաքակիրթ

ազգերից մէկը, վաղագոյն ժամանակներում՝ գոնէ Ք.Ա. 7-րդ 5-րդ հազարամեակներում՝ արիական-հնդեւրոպական մայր ժողովրդից անջատուելուց եւ ինքնուրոյն ցեղ ձեւաւորուելուց յետոյ, տրամաբանօրէն արդէն պէտք է ունենար սեփական ինքնութեան ուրուագիծը, քանի որ նրա մօտ առկայ էին առանձին ազգին յատուկ բազմաթիւ յատկանիշներ՝ ինքնուրոյն լեզու, հետեւապէս՝ լեզուամտածողութիւն, տարածք, մշակութային ինքնատիպ նկարագիր եւ իրեն այլ ազգերից զանազանելու, անգամ նրանց հակադրուելու, իր եսը (ի հարկէ՝ դրական իմաստով) գիտակցելու ունակութիւն: Այդուհանդերձ, կարծում ենք, որ տուեալ ժամանակաշրջանում ինքնութեան շատ որակներ հանդէս էին գալիս խիստ մշուշապատ եւ դրանք շատ յաճախ նոյնանում էին հնդեւրոպական ազգակից այլ ժողովուրդների, մասնաւորապէս՝ հին պարսիկների, հնդիկների, յոյների եւ այլոց էթնո-մշակութային յատկանիշների հետ:

բ) Պետական մտածողութեան ինքնութեան շրջափուլ: Հին ժամանակներում հայկական ինքնութեան զարգացմանը մեծապէս նպաստում է Հայկական լեռնաշխարհում Ք.Ա. առնուազն 3-րդ հազարամեակի սկզբներին հանդէս եկած առաջին պետական կազմաւորումը՝ Արատտան, Աստուածաշնչում յիշատակուող Արարատի (Արարատայ, Արարադի) երկիրը:[1] Յատկանշական է, որ հայ նշանաւոր պատմաբաններից առաջինը Միքայէլ Չամչեանի՝ Վանայ լճին ափին Հայկ Նահապետի եւ Բէլի միջեւ տեղի ունեցած ճակատամարտի ու Հայոց երկրում պետականութեան հիմնադրման ժամանակի վերաբերեալ (Ք.Ա. 2492 թ.) եւ

[1] Տե՛ս Աստուածաշունչ, Ծննդոց 7, 8, էջ 11:

հայ ներկայիս պատմաբանների, մասնաւորապէս Արտակ Մովսիսեանի յայտնած տեսակէտները, համընկնում են:[2] Ուստի, այդ ժամանակաշրջանը՝ Ք.Ա. 3-րդ հազարամեակը կարելի է համարել հայ ինքնութեան ձեւաւորման առաջին փուլի աւարտը եւ պետական մտածողութեան ձեւաւորման սկիզբը: Այդուհետ ցեղային ինքնութեան ձեւաւորման գործում պետականութեան գոյութիւնը դառնում է կարեւորագոյն բաղադրամաս:

Հին Հայաստանի բնակչութեան ցեղային ինքնութեան աւելի վառ դրսեւորումները վերաբերում են լեռնաշխարհում Ք.Ա. 9-րդ դարի կէսերին ասպարէզ իջած առաջին համահայկական պետութեան՝ Վանի (Բիայնիլի, Արարատի, Ուրարտու) թագաւորութեան ժամանակներին: Այդ ինքնութեան բարձր մակարդակը պահպանւում է մինչեւ հին շրջանի աւարտը՝ Ք.Յ. 4-րդ դարը: Հին Հայաստանում ցեղային ինքնութեան հզօր ազդակներ են դառնում մայրենիի տարածումը, Հայկական պետութեան աննախադէպ հզօրացումը Արարատեան թագաւորութեան, Երուանդունիների, Արտաշէսեանների, յատկապէս՝ Տիգրան Մեծի օրօք (Ք.Ա. 95-55 թթ.) եւ հին հայկական ու հելլենիստական մշակոյթի զարգացումը: Արտաշէսեան արքաներից շատերը սկսում են կրել «արքայից արքայ» պատուատիտղոսը, որը նրանց գերակայ դիրք էր տալիս ամբողջ տարածաշրջանի պետութիւնների մէջ: Ուստի կարելի է ասել, որ այդ շրջափուլում ժամանակ առ ժամանակ հայութեան մէջ նկատւում են նաեւ կայսերական պե-

[2] Տե՛ս Մովսիսեան Արտակ, Դանիէլեան Երանուհի, *Հայկական լեռնաշխարհում պետականութեան սկզբնաւորման խնդրի շուրջ*, Բանբեր Երեւանի համալսարանի, 2010, թիւ 130.1, էջ 21-28:

տութեան քաղաքացուն բնորոշ մտածողութեան ու ինքնութեան բազմաթիւ տարրեր:

Պատմահայր Մովսէս Խորենացին այդ ժամանակաշրջանի մասին խօսելիս Հայոց թագաւորութեան ու նրա տիրակալների հասցէին գործածում է «հուժկու», «անուանի», «յաղթող», «աշխարհակալ» եւ այլ եզրոյթներ, խնդութիւն ապրում հզօր թագաւորութեան համար՝ ընդգծելով, որ ուրախ կը լինէր, եթէ այդ ժամանակ աշխարհ եկած լինէր: «Եւ այժմ ահա զուարճացոյց,– գրում է նա,– ոչ փոքր ինչ կրելով խնդութիւն, հասանելով ի տեղիս, յորում մերոյ իսկ բնիկ նախնւոյն սերունդք ի թագաւորութեան հասանեն յաստիճան»:[3] Քիչ անց պատմահայրն աւելացնում է. «Եւ սիրելի էր ինձ՝ յայնժամ գալ Փրկչին եւ զիս գնել, եւ առ նոքաւք յաշխարհ զմուտն իմ լինել, եւ նոցա տէրութեամբն խրախճանալ, եւ յարդեացս ապրել վտանգիցս»:[4]

գ) **Քրիստոնէական ինքնութեան ձեւաւորման շրջան:** 301 թ. աշխարհում առաջինը քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն ընդունելուց յետոյ հայ իրականութեան մէջ սկսւում է նոր՝ քրիստոնէական ինքնութեան փուլը: Նոր կրօնը դառնում է հայ ժողովրդի ինքնութեան գլխաւոր ցուցիչներից մէկը: Նրան հակադրում է զրադաշտականութիւն դաւանող հարեւան պարսիկներին: Ոչ քրիստոնէական կրօնները Հայ եկեղեցու կողմից դիտւում են որպէս աղանդներ: Դրա կրօնափիլիսոփայական ձեւակերպումը փայլուն ձեւով ներկայացնում է 5-6-րդ դարերի նշանաւոր փիլիսոփայ Եզնիկ Կողբացին «Եղծ Աղանդոց» աշխատութիւնում:

4-րդ դարի վերջերին (387 թ.) առաջին անգամ Մեծ Հայքի թագաւորութիւնը տրոհւում է երկու մասի. Արեւելեան Հայաստանն ընկնում է Սասանեան Պարսկաստանի, իսկ Արեւմտեան Հայաստանը՝ Հռոմի (391 թ.-ականից՝ Բիւզանդիա) տիրապետութեան տակ: Տըւեալ ժամանակաշրջանում հայկական երբեմնի հզօր պետութիւնը թուլանում է ու բաժանւում, իսկ 428 թ.՝ Արշակունեաց հարստութիւնն անկում է ապրում: Հին Հայաստանի պատմութեամբ հպարտացող Խորենացին արդէն աւելի համեստ գնահատական է տալիս վաղ միջնադարեան Հայաստանի պատմութեանը, բայց չի մոռանում ընդգծել, որ լինելով փոքր ազգ, իրենք աշխարհում կատարել են շատ արժէքաւոր գործեր. «Զի թէպէտ եւ եմք ածու փոքր, եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, եւ զաւրութեամբ տկար, եւ ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ՝ սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոյ յիշատակի, զոր եւ ոչ մի ոք ի նոցանէ պէտ յանձին կալաւ մատենագրել»:[5] Նման տկարացման պատճառը որոշ ուսումնասիրողներ համարում են քրիստոնէական արժէքների ընդունումը: Մասնաւորապէս մատնանշւում է այն հանգամանքը, որ ազգային գաղափարախօսութեանը փոխարինած համամարդկային-քրիստոնէական գաղափարները Հայոց երկրի թուլացման պատճառ են դարձել:

Իրականութիւնն այն է, որ ընդունելով քրիստոնէական արժեհամակարգը, հայ ժողովուրդը, յատկա-

---

[3] Մովսէս Խորենացի. *Պատմութիւն Հայոց*, գիրք առաջին, *Մատենագիրք Հայոց*, Բ. հատոր, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1809:
[4] Նոյն տեղում, էջ 1811:
[5] Նոյն տեղում, էջ 1752:

պէս Հայոց պետութիւնը միաժամանակ ջանքեր գործադրեցին Հայոց եկեղեցին ազգային դարձնելու համար: Այդ ուղղութեամբ առաջին վճռական քայլը կատարեց Պապ Արշակունի թագաւորը (370-374 թթ.), երբ խախտելով գոյութիւն ունեցող կարգը, արգելեց հայոց կաթողիկոսների օծումը Կեսարիայում եւ պահանջեց այդ արարողակարգն այդուհետ իրականացնել Հայաստանում:[6]

Շուտով՝ Հայ եկեղեցու ինքնուրոյն կարգավիճակի ամրապնդմանը զուգընթաց, որի գագաթնակէտը դարձաւ 451 թ. Քաղկեդոնի տիեզերական ժողովին մասնակցելուց հրաժարուելն ու միաբնակութիւն ընդունելը, քրիստոնէական ինքնութիւնը հայութեան շրջանում վերածուեց ազգային ինքնութեան: Աւելին՝ 450-451, 481-484 եւ 571-572 թթ. հայ ժողովուրդը կենաց ու մահու կռուի դուրս եկաւ Պարսկաստանի պարտադրած հաւատափոխութեան քաղաքականութեան դէմ: Պատահական չէ, որ հայ մատենագիրների եւ հետագայ ուսումնասիրողների զգալի մասը վերոյիշեալ հակապարսկական ապստամբութիւնները գնահատեց որպէս կրօնական շարժումնք (պատերազմներ):[7]

Քրիստոնէական ինքնութիւնը, արդէն խարսխուած իր ազգային՝ Հայ Առաքելական Եկեղեցու կառոյցի վրայ, հայութեան համար 6-7-րդ դդ. ինքնապահպանութեան հզօր միջոց մնաց Բիւզանդական կայսրութեան պաշտօնական դաւանանքի՝ քաղկեդոնականութեան (ուղղափառութեան), իսկ արաբական տիրապետութեան շրջանում (8-րդ դար եւ 9-րդ դարի առաջին կէս)՝ իսլամի դէմ: Ուստի ինչպէս պարսիկներն Արեւելեան Հայաստանում (Մարզպանական Հայաստան), բիւզանդացիները՝ Արեւմտեան Հայաստանում (Սատրապական Հայաստան), իսկ արաբները՝ իրենց ստեղծած «Արմինիա» վարչամիաւորում ի վերջոյ ստիպուած էին ձեռնպահ մնալ իրենց ազգակիցներով երկիրը բնակեցնելու եւ կրօնադաւանական ճնշումների քաղաքականութիւնից ու պահպանել Հայոց երկրի ներքին ինքնուրոյնութիւնը:[8]

Հայ քրիստոնէական ինքնութիւնն իր դրսեւորումներն ունեցաւ նաեւ հետագայում: Իններորդ դարի երկրորդ կէսին Հայ Առաքելական եկեղեցու ամենագործուն աջակցութեամբ Բագրատունիները վերականգնեցին հայկական պետականութիւնը: Ճիշդ է՝ այդ պետութիւնը երկար չկարողացաւ պահպանել իր միասնականութիւնը եւ տրոհուեց: Սակայն դա գերազանցապէս պայմանաւորուած էր զարգացած աւատատիրական յարաբերութիւններով, որի ընթացքում, որպէս կանոն, սկիզբ է առնում քաղաքական մասնատուածութիւնը: Աւելին՝ շուտով հայերը 11-րդ դարի վերջին Կիլիկիայում ստեղծեցին իրենց նոր պետականութիւնը, որը 12-րդ դ. վերջին վերածուեց թագաւորութեան եւ գոյութիւն ունեցաւ մինչեւ 1375 թ.: Ուստի եւ, բոլոր այն պնդումները, թէ քրիստոնէութեան ընդունումով միջնադարում հայկական պետականութիւնը,

---

[6] Տե՛ս Փաւստոս Բիւզանդ, *Պատմութիւն Հայոց*, թարգմանութիւնը, ներածութիւնը եւ ծանօթագրութիւններն ակադեմիկոս Մտ. Մալխասեանցի, Եր., 1968, էջ 265-266:

[7] Տե՛ս Եղիշէ, *Վարդանի եւ Հայոց պատերազմի մասին*, թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Ե. Տեր-Մինասեանի, Եր., 1971, Գարագաշեան Ա.Մ., *Քննական Պատմութիւն Հայոց*, մաս Դ., Թիֆլիս, 1895 եւայլն:

[8] Մանրամասն տե՛ս Ադոնց Նիկողայոս, *Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում*, Եր., 1987, էջ 241, Տէր Ղեւոնդեան Արամ, *Յօդուածների ժողովածու*, Եր., 2003, էջ 133, 299:

ինչպէս եւ հայ ինքնութեան կարողականութիւնը տկարացան, գիտութեան հետ որեւէ կապ չունեն:

դ) **Ինքնութեան ձեւախեղման շրջափուլ**: 11-րդ դարի առաջին կէսին պայմանաւորուած Հայաստանի համար ստեղծուած աշխարհաքաղաքական բարդ իրավիճակով (արեւելքից սելճուք-թուրքերի արշաւանքներ, հայկական հողերի նկատմամբ Բիւզանդական կայսրութեան ոտնձգութիւններ) հայ իրականութեան մէջ ծնունդ առաւ մի վտանգաւոր մտայնութիւն, թէ ստեղծուած իրադրութեան մէջ ամենանախընտրելի լուծումը հայկական գաւառները քրիստոնեայ Բիւզանդիային զիջելն է եւ հայրենի եզերքներից արտագաղթը: 1021 թուականին Վասպուրականի վերջին թագաւոր Սենեքերիմ Արծրունին իր թագաւորութիւնը կտակեց Բիւզանդիային եւ տասնեակ հազարաւոր իր համաերկրացիներով հեռացաւ Փոքր Հայք, շատերը հաստատուեցին նաեւ Կիլիկիայում: Գանձակից արտագաղթեց Օշին իշխանը, Վանի շրջակայքից Աբլղարիբ Արծրունին: Հայրենի հողում մնալու, պայքարելու աւանդական գործելակերպին փոխարինելու եկաւ նոր արտագաղթելու աղէտաբեր սովորոյթը: Այդ մտայնութիւնը յատկապէս գերիշխող դարձաւ Անիի Բագրատունեաց թագաւորութեան անկումից (1045) յետոյ:

Անկախ հայկական թագաւորութիւնների կործանման ու արտագաղթի սաստկացմանը զուգընթաց Կենտրոնական եւ Արեւելեան Եւրոպայում (Հունգարիա, Լեհաստան, Պալքաններ, Մերձսեւծովեան շրջաններ եւ այլուր) արագօրէն ստուարացան հայկական գաղթավայրերը: Թէպէտ դրանցից մի քանիսը, յատկապէս լեհահայ, հունգարահայ եւ աստրախանահայ համայնքները ժամանակի ընթացքում մեծ վերելք ապրեցին եւ ձեռք բերեցին անգամ իրաւական կարգավիճակ, սակայն շուտով բոլոր նրանք, ովքեր ընդունեցին կաթոլիկական դաւանանքը (լեհահայեր եւ հունգարահայեր) տասնամեակներ անց կորցրեցին իրենց ազգային ինքնութիւնը եւ ձուլուեցին տեղի ժողովուրդների մէջ:

Վերոյիշեալ շրջափուլում ազգային ինքնութեան կորուստ տեղի ունեցաւ նաեւ Հիւսիսային Հայաստանում (Տայք, Ախալցխա, Ջաւախք, Լոռի), որտեղ հայութեան մի մասը վրաց եկեղեցու ճնշումների ներքոյ ընդունեց ուղղափառութիւն: Էթնոդաւանական ձեւախեղման ենթարկուած այդ հայութեանը հայ հեղինակներն անուանում էին «ազգաւ հայ, կրօնաւ վրացի»:

Ազգային ինքնութեան կորուստը մեծ ծաւալներ ընդունեց 16-18-րդ դարերի ընթացքում, երբ սկսուած թուրք-պարսկական երկարատեւ ու արիւնալի պատերազմների թատերաբեմ դարձաւ Հայաստանը, սուլթանական կառավարութեան վարած ժողովրդագրական քաղաքականութեան հետեւանքով բազմահազար քոչուոր քրտական ցեղեր ներթափանցեցին Հայկական լեռնաշխարհ: Այդուհետ ծայր առաւ հայութեան որոշակի զանգուածների թուրքացման ու քրտացման գործընթացը:[9] Իրականում հայ ինքնութեան առաջին զանգուածային այս վերակերպումները դիմախեղեցին Հայաստանի ժողովրդագրական պատկերը եւ հետագայում աւելի խոցելի դարձրեցին հայ հասարակութիւնը Հայոց ցեղասպանութեան երիտթուրքական քաղաքականութեան իրականացման ճանապարհին:

Որքան էլ 11-րդ դարի կէսերից մինչեւ 20-րդ դարի

---

[9] Հայ բնակչութեան էթնոկրօնական ու էթնոդաւանական վերակերպումների մասին մանրամասն տե՛ս Մելքոնեան Ա., *Հայաստանի պատմութեան եւ ժողովրդագրութեան հիմնահարցեր*, Եր., 2011, էջ 289-303:

սկիզբն ընկած ժամանակաշրջանը ազգային ինքնութեան ձեւախեղման ու նահանջի շրջափուլ էր, այնուամենայնիւ այդ ընթացքում ժամանակ առ ժամանակ տեղի էին ունենում ազգային զարթօնքի բազմաթիւ առկայծումներ: Պատահական չէ, որ այդ շրջափուլին բնորոշ է ազատագրական շարժումների վերելքը (17-18-րդ դարերում դրանք նշանաւորեցին հայոց պատմութեան նոր ժամանակաշրջանի սկիզբը), ազգային կուսակցութիւնների ստեղծումն ու գործունէութեան աշխուժացումը եւ այլն: Ինչեւէ, այս ամէնով հանդերձ, սոյն շրջափուլը միանշանակօրէն ամենաբարդն ու կորստաբերն էր, քանի որ դրա վերջնափուլն Առաջին աշխարհամարտի շրջանն էր, որի ընթացքում օսմանեան իշխանութիւնների կողմից իրականացուեց հայ ժողովրդի ցեղասպանութիւնն ու հայրենազրկումը:

ե) Ինքնութեան վերածննդի շրջափուլ: Հայոց մեծ եղեռնից ընդամէնը երեք տարի անց՝ 1918 թ., մայիսին, շնորհիւ Սարդարապատում, Բաշ Ապարանում, Ղարաքիլիսայում, Ջաւախքում, Շիրակում եւ այլուր թուրքերի դէմ մղուած հերոսամարտերի ժամանակ հայ ժողովրդի դրսեւորած միասնականութեան, ազգային ինքնութեան աննախադէպ պոռթկման հնարաւոր եղաւ Արեւելեան Հայաստանի մի հատուածի վրայ Մայիսի 28-ին վերականգնել հայոց անկախ պետականութիւնը: Այդ պատմական իրադարձութեամբ սկսուեց Հայոց նորագոյն պատմութեան ժամանակաշրջանը:

Պետականութեան զգացողութիւնը, պետական մըտածողութիւնը, որ հին եւ միջին դարերում կազմում էին հայ մարդու աշխարհայեացքի անբակտելի մասը, կրկին համակեցին համայն հայութեանը: 1919 թ. Մայիսի 28-ին անկախութեան հռչակման տարեդարձի օրը՝ ի կատարումն նաեւ արեւմտահայութեան պատ-

մական իղձերի,[10] Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը երկիրը հռչակեց անկախ եւ միացեալ հանրապետութիւն:[11] Դրանով ՀՀ-ն յայտարարում էր նաեւ բռնազաւթուած Արեւմտեան Հայաստանի վրայ իր իշխանութեան տարածման մասին: Հայութեան այս դարաւոր երազանքն իր իրաւական ձեւակերպումը ստացաւ 1920 թ. Օգոստոսի 10-ին Սեւրում Անտանտի երկրների ու Օսմանեան կայսրութեան միջեւ կնքուած պայմանագրի 88-93-րդ յոդուածներով, որոնց համաձայն Միացեալ Հայաստանին էր միացուելու արեւմտահայ 4 նահանգների (Վան, Պիթլիս, Էրզրում եւ Տրապիզոն) մեծ մասը: 1920 թ. Նոյեմբերի 22-ին Միացեալ Նահանգների նախագահ Վուդրօ Ուիլսընի կազմած իրաւարար վճռի համաձայն ՀՀ տարածքը կազմելու էր շուրջ 160 հազ. քառ. քմ.՝ դէպի Սեւ ծով նաւահանգստային ելքով:

Ճիշդ է՝ քեմալապոլշեւիկեան գործակցութեան հետեւանքով Սեւրի դաշնագիրը կեանքի չկոչուեց, իսկ Հայաստանի Հանրապետութիւնը 1920 թ. Դեկտեմբերի սկզբին կործանուեց: Սակայն պետականութեան գաղափարն ու պետականամէտ մտածողութիւնն այնքան զօրաւոր էին, որ ընդամէնը երկուս ու կէս ամիս անց հայ ժողովուրդը չհանդուրժեց համայնավարների բըռ-

---

[10] 1919 թ. Փետրուարին Արեւմտահայերի երկրորդ համագումարը հանդէս էր եկել Միացեալ Հայաստանի հռչակման պահանջով:

[11] Միացեալ Հայաստանի հռչակման պատմական նշանակութեան մասին տե՛ս Մելքոնյան Ա., *Միացեալ Հայաստանի հռչակագրի պատմական խորհուրդը, Հանրապետական գիտաժողովի նիւթեր*, նուիրուած միացեալ եւ անկախ Հայաստանի անկախութեան մասին հռչակագրի 90 եւ Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի հիմնադրման 40-ամեակներին, Վանաձոր, 2009 էջ 4-8:

նութիւնները եւ 1921 թ. Փետրուարի կէսերին վերականգնեց անկախ հանրապետութիւնը: Հայոց անկախ պետականութիւնն Այսրկովկասի տարածաշրջանում ամենաերկարը պահպանուեց Հայաստանի մի մասում՝ Միւնիքում (Լեռնահայաստան)՝ մինչեւ Յուլիսի կէսերը:

Յատկանշական է, որ Առաջին Հանրապետութեան կարճատեւ գոյութեան ընթացքում պետականամէտ ինքնութիւնն այնքան հզօրացաւ, որ անգամ համակեց հայ համայնավարներին: Պատահական չէ, որ հայ պոլշեւիկների՝ Հայաստանի խորհրդայնացման մասին 1920 թ. Դեկտեմբերի 2-ին Երեւանում Խորհրդային Ռուսաստանի եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ կնքուած համաձայնագրի առաջին կէտով «Հայաստանը յայտարարւում էր *անկախ* (ընդգծումն իմն է Ա. Մ.) Սոցիալիստական Հանրապետութիւն»[12]: Իրօք, Խորհրդային Հայաստանի գոյութեան առաջին տարիներին այդ յարաբերական անկախութիւնը պահպանուեց մինչեւ 1922 թ. Մարտի 12-ը, երբ Հայաստանը մտցուեց Անդրկովկասեան դաշնային հանրապետութեան կազմի մէջ եւ ինքնուրոյն միութենական հանրապետութեան վերածուեց միայն 1936 թ.:

Իրական անկախութիւնից զուրկ, բայց պետականութեան բազմաթիւ դրսեւորումներ ունեցող Խորհրդային Հայաստանում անգամ ստալինեան բռնաճնշումների պայմաններում հայ ազգային ինքնութեան մակարդակը շարունակեց մնալ բաւական բարձր. ասպարէզ իջան պետական մտածողութեան բազմաթիւ գործիչներ (Ալեքսանդր Միասնիկեան, Ալեքսանդր Բեկզադեան, Աղասի Խանջեան, Գրիգոր Յարութիւնեան, Եակով Զարոբեան եւ այլք), գիտութեան, մշակոյթի ու գրականութեան ականաւոր դէմքեր:

Նորագոյն ժամանակներում հայ ինքնութեան զարթօնքն իր աննախադէպ բարձրութեանը հասաւ 1965 թ., երբ սփիւռքում եւ հայրենիքում նշուեց Հայոց ցեղասպանութեան 50-րդ տարելիցը: Հայ դատի համար պայքարը հայկական համայնքներից հետզհետէ տեղափոխուեց նաեւ Հայաստան: Այն դարձաւ հայ ինքնութեան պահպանման ու զարգացման գլխաւոր ազդակներից մէկը:

1988 թ. Սպիտակի աղէտալի երկրաշարժը ոտքի հանեց համայն հայութեանը: Արցախեան շարժման ու պատերազմի տարիներին էլ աւելի ամրապնդուեց հայ ժողովրդի միասնականութեան գաղափարը: Հայ ազգային ինքնութեան նոր պոռթկման ալիքը 1991 թ. սեպտեմբերին կեանքի կոչեց Հայոց անկախ պետականութիւնը՝ Հայաստանի Հանրապետութեան եւ Լեռնային Ղարաբաղի (այժմ՝ Արցախի) Հանրապետութեան տեսքով: Հայաստան-սփիւռք գործակցութեան համար բացուեցին նոր հեռանկարներ:

Հայաստանի անկախացումով իրականութիւն դարձաւ հայ ժողովրդի երազանքը: Սակայն յետանկախական տարիներին, երբ թւում էր, թէ հայ ինքնութեան զարթօնքը ժամանակի ընթացքում նոր բարձունքների պէտք է հասնի, յանգեցնի նորանկախ Հայաստանի աննախադէպ վերելքին, զարմանալիօրէն ծայր առան գործընթացներ (հայրենիքից օրէցօր ահազնացող արտագաղթ, Հայաստանի իշխանութիւնների հանդէպ սփիւռքահայութեան անվստահութեան խորացում, արտերկրում ուծացման գործընթացների արագացում, հայ հասարակութեան բարոյահոգեբա-

[12] *Հայաստանի Հանրապետութիւնը 1918-1920 թթ.* (քաղաքական պատմութիւն), փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, Եր., 2000, էջ 383:

նական վիճակի վատթարացում եւ այլն), որոնք հետզհետէ վերածուեցին ազգային անվտանգութեան ու ինքնութեանը սպառնացող լրջագոյն վտանգների:

Ներկայումս օրախնդիր է դարձել ազգային պետութեան շուրջ համայն հայութեան միաւորման հրամայականը: Անհրաժեշտ է առաջ քաշել այնպիսի գաղափարներ, որոնք ընդունելի կը լինեն հայ ժողովրդի բոլոր հատուածների համար թէ՛ հայրենիքում եւ թէ՛ սփիւռքում: Կարծում ենք, որ նման գաղափարների մէջ առաջնայինը պէտք է լինի Հայոց ցեղասպանութեան հետեւանքների վերացման, այն է՝ հողային ու նիւթական հատուցման հասնելու պայքարը: Առանց հատուցման խնդիրը լուծելու, այսինքն՝ Միացեալ Հայաստանի ստեղծման, հնարաւոր չէ թշնամական շրջափակ վիճակից հանել հայկական երկու պետութիւնները, ազատել հայ մարդուն ցեղասպանուածի արդէն մէկդարեայ բարդոյթից եւ հասնել ազգային քնած ինքնութեան լիակատար արթնացմանն ու զարգացմանը:

Պատմական բարդ ու մղձաւանջային իրավիճակներից ելք գտնելու հայ ժողովրդի բազմադարեայ փորձը յուշում է, որ այդ խնդիրը միանգամայն լուծելի է, քանի որ ի տարբերութիւն այլ իրավիճակների, ներկայումս հայ ժողովուրդն ունի իր պետականութիւնը, յաղթանակած բանակը, ազգային եկեղեցին, սփիւռքեան կառոյցների վիթխարի կարողականութիւնը, բրնազաթուած Արեւմտեան Հայաստանում ծպտեալ հայութեան արթնացող ինքնութիւնը եւ պահանջատիրութեան խնդիրն առաջ տանելու համազգային անկոտրում կամքը:

ՓՐՈՖ. ԴՈԿՏ. ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ – ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԿԱՋՄԱՒՈՐՈՒՄ, ԿՈՐՈՒՍՏ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ.- ՀԱՅԱՍՏԱՆ, ԿԻԼԻԿԻԱ, ՍՓԻՒՌՔ

ԿԻԼԻԿԻԱ

Առանց պատմական գիտութեան կարելի չէ փիլիսոփայել, ճիշդ է նաեւ հակառակը, առանց փիլիսոփայական-քննադատական մեթոտին կարելի չէ պատմաբանել: Քանի որ սեղմ շրջանակի մէջ այս համագումարին նպատակն է իրողական շրջանակներու մէջ ներկայ հայ վիճակը քննել, վերլուծել եւ հասկնալ, ուրեմն անցեալին հասկացողութիւնը կ'ըլլայ անհրաժեշտութիւն: Մասնաւոր կերպով կը գնահատեմ անոր բացումը պատմակա՛ն նիստով մը «Հայաստան, Կիլիկիա, Սփիւռք» մասերու բաժանումով, փոխանակ «Հայաստան-Սփիւռք» ընթացիկ տարածումին:

Ամբողջ հայոց պատմութեան մէջ Կիլիկիան մեծ, իւրայատուկ եւ կենսական հանգրուան է, եւ կը պահանջէ պատմափիլիսոփայական եւ առարկայական վերարժեւորում հայ ե՛ւ մերձաւոր արեւելեան պատմութեանց ծիրին մէջ:[1] Այսինքն, եթէ պիտի փորձենք

[1] Տե՛ս, Seta B. Dadoyan, "The Move of the Armenian Catholicosate from Armenia to Antelias", in *The Armenian Catholicosate of Cilicia: History, Treasures, Mission.* Editor-Co-Author Seta B. Dadoyan (Beirut: Catholicosate Publications, 2015), 22-67; *The Armenians in the Medieval Islamic World Fourth - Fourteenth Centuries: Paradigms*